ՀՀ ԿԳՄՆ

«Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ» ՊՈԱԿ

Հաստատում եմ

ԵՊՏՔ Կառավարման խորհրդի

նախագահ Ա. Բարեղամյան

«16» 02 2024 թ.

(ստորագրություն)

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀՀ ԿԳՄՄՆ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԿԱՆՈՆԱԿԱՐԳ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

- *ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ*

1. 1 Քոլեջի ուսանողական խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) ինքնակառավարման, ուսանողներին միավորող, նրանց շահերը պաշտպանող, ընտրովի ներկայացուցչական մարմին է, որի լիազորություններն ու գործունեությունը, ՀՀ օրենսդրությանը և կանոնադրական ակտերին համապատասխան, սահմանվում են քոլեջի կանոնադրությամբ, քոլեջի ղեկավար մարմինների որոշումներով, ինչպես նաև սույն Կանոնակարգով :

- *ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ*

  - ✓ ***Իր նպատակների իրականացման համար խորհուրդն ունի հետևյալ առաքելությունները.***

2.1 Խորհրդի հիմնական նպատակն է նպաստել ուսանողների ակտիվ մասնակցությանը քոլեջի ուսանողակենտրոն գործունեությանը:

2.2 Տարածել տեղեկատվություն ուսանողների շրջանում:

2.3 Պաշտպանել ուսանողների շահերն ու իրավունքները, ապահովել ուսանողների մասնակցությունը քոլեջի կառավարմանը և քոլեջի կառավարման մարմիններին հասանելի դարձնել ուսանողությանն առնչվող բազմաբնույթ հարցեր:

2.4 Իրազեկել ուսանողներին իրենց իրավունքների և պարտականությունների մասին:

2.5 Համախմբել Քոլեջի ուսանողներին տարբեր ուսանողական միավորումներում՝ հանձնաժողովներում, խմբակներում, միություններում՝ նպաստելով ուսանողների համար բարենպաստ միջավայրի ձևավորմանն ու խթանելով ուսանողների գիտական, կրթական, հոգևոր, մշակութային, ստեղծագործական ու ֆիզիկական զարգացմանը:

2.6 Ներկայացնել առաջարկներ ուսուցման որակի բարձրացման վերաբերյալ և քոլեջի համապատասխան մարմինների կողմից վավերացումից հետո նպաստել դրանց ընդունմանն ու հետևողական լինել իրականացման գործընթացին:

2.7 Աջակցել ուսանողների սոցիալական վիճակի բարելավմանը, կազմակերպել ուսանողական և երիտասարդական տոներին նվիրված միջոցառումներ, մասնակցել քոլեջում սպորտային հանդիպումների, հանգստի և ժամանցի կազմակերպմանը:

  - ✓ ***Առաջարկված նպատակներին հասնելու և առաջադրված խնդիրների լուծման համար Խորհուրդն իրավասու է.***
    - Մշակելու և իրականացնելու տարբեր միջոցառումներ ուսանողների՝ քոլեջի կանոնադրությամբ ապահովվող իրավունքների պաշտպանության համար:
    - Օգտագործելու քոլեջի տեղեկատվական միջոցները՝ ուսանողական կյանքը լուսաբանելու, ինչպես նաև Խորհրդի որոշումներն օպերատիվ կերպով ուսանողությանը հասցնելու համար:

- Քոլեջի կանոնադրության համաձայն ունենալու ուսանողական կազմից ներկայացուցչություն քոլեջի կառավարման մարմիններում՝ ապահովելով ուսանողների մասնակցությունը քոլեջի գործունեությանը վերաբերող կարևորագույն հարցերի լուծմանը:

➢ ***ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ***

Կ Ա Ռ ՈՒ Ց Վ Ա Ծ Ք



3.1 Խորհուրդը ձևավորում է քոլեջի համապատասխան կուրսերի ներկայացուցիչներից՝ ընտրության սկզբունքով:
3.2 Խորհրդի ղեկավար մարմինը նախագահն է, կառուցվածքային ստորաբաժանումները՝ հանձնաժողովները:
3.3 Խորհրդի նիստերը գումարվում են կիսամյակում առնվազն երկու անգամ, սակայն կարող են արտահերթ ժողովներ հրավիրել՝ ըստ անհրաժեշտության:
3.4 Խորհուրդը ընդունում է իր կանոնակարգը, հաստատում է իր գործունեության տարեկան աշխատանքային պլանը:
3.5 Լսում և քննարկում է իր նախագահի և հանձնաժողովների հաշվետվությունները, քննարկում է Խորհրդին առնչվող այլ հարցեր և ընդունում համապատասխան որոշումներ:
3.6 Խորհրդի նախագահի ընտրությունը կատարվում է նիստում՝ փակ գաղտնի քվերկությամբ (եթե այդ մասին այլ որոշում չի կայացվում):Նախագահի թեկնածուն համարվում է ընտրված, եթե նրա օգտին քվեարկել է Խորհրդի ներկա ադամների մեծամասնությունը:
3.7 Ընտրվում են նաև Խորհրդի փոխնախագահ, քարտուղար և հանձնաժողովների նախագահներ:

- ***ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԸ***

4.1 Ղեկավարում է ուսանողական խորհուրդը և կազմակերպում է Խորհրդի աշխատանքները, հաստատմանն է ներկայացնում Խորհրդի աշխատանքային պլանը: Իր գործունեության մասին հաշվետվություն է ներկայացնում Խորհրդին և տնօրենին: Իր բացակայության ժամանակ նախագահի պարտականությունների կատարումը դնում է Խորհրդի փոխնախագահի վրա:

- ✓ Խորհուրդն իր գործունեության հիմնական ուղղությունների իրականացման համար ձևավորում է հետևյալ հանձնախմբերը.
  - Հաճախումների վերահսկման և ամենօրյա հաշվառման հանձնախումբ
  - Ուսման որակի վերահսկաման հանձնախումբ
  - Դաստիարակչական աշխատանքների հերթապահության սահմանման հանձնախումբ
  - Միջոցառումների կազմակերպման հանձնախումբ
  - Տնօրենի հետ խորհրդակցման հանձնախումբ

  Որպես կամավոր աջակիցներ՝ խորհրդի հանձնաժողովների աշխատանքներին կարող են աջակցել նաև խորհրդի անդամ չհանդիսացող ուսանողներ:

- ***ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ***
  - ✓ ՈՒսանողական խորհրդի անդամներն իրավունք ունեն.

5.1 Ընտրել և ընտրվել Խորհրդի ղեկավար մարմիններում
5.2 Վերոնշյալ կանոնակարգի համաձայն մասնացել Խորհրդի կառավարմանը
5.3 Մասնակցել Խորհրդի կողմից անցկացվող միջոցառումներին
5.4 Ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն Խորհրդի աշխատանքի վերաբերյալ, դուրս գալ Խորհրդի կազմից՝ նախագահին ներկայացվող գրավոր դիմումի համաձայն:

- ✓ ՈՒսանողական խորհրդի անդամները պարտավոր են

5.5 Օժանդակել Խորհրդի հեղինակության ամրապնդմանը, գործունեության կատարելարծմանն ու ցուցաբերել Խորհրդի կողմից անցկացվող, միջոցառումների, ծրագրերի մշակմանը և դրանց հավուր-պատշաճի իրականացմանը:

5.6 Պահպանել վերոնշյալ կանոնակարգը՝ կատարելով Խորհրդի ղեկավար մարմինների որոշումները:

5.7 Խուսափել այնպիսի գործողություններից, որոնք կարող են վնասել Խորհրդի կամ նրա անդամների շահերը:

- **Խորհրդի կամ նրա անդամների շահերը կարող են վաղաժամկետ դադարեցվել հետևյալ դեպքերում.**

6.1 Նախագահի կողմից գլխավոր ժողովներից պարբերաբար բացակայելու, որոշումները չկատարելու և կարգապահական խախտումների, քոլեջի կանոնադրությամբ ահմանված ուսանողի պարտականությունները չկատարելու դեպքերում, ինչպես նաև խորհրդի կողմից անվստահություն հայտնելու դեպքում:
6.2 Ուսումնառությունն ավարտելու կամ ընդհատվելու դեպքում /հեռացվել, դուրս մնալ քոլեջից/
6.3 Անձնական դիմումի համաձայն
6.4 Ուսումնական հաստատությանը նյութական կամ բարոյական վնաս պատճառելու դեպքում
6.5 Անդամներից որևէ մեկի լիազորությունները դադարեցնելու որոշումը կայացնում է Խորհրդի նախագահը:

- ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

7.1 Խորհրդի ֆինանսական միջոցները գոյանում են նվիրատվություններից, հանգանակություններից, դրամաշնորհներից և ՀՀ օրենսդրությանը չհակասող այլ աղբյուրներից: ՈՒԽ-ն անվճար կարող է օգտվել քոլեջի տարածքային և գույքային միջոցներից:

- ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

8.1 Ուսանողական խորհուրդը համարվում է լուծարված քոլեջի տնօրինական խորհրդի կողմից, եթե չի կատարել իր լիազորությունները:
8.2 Վերակազմավորվում է սահմանված կարգով՝ տասն աշխատանքային օրվա ընթացքում: